www.realwrp.org

real world
real people

«ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ԻՐԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ» ՍՀԿ-Ի ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ

2026

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից «ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում 2026թ.-ի երկրորդ եռամսյակի (ապրիլ-հունիս) ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	1713
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	2020
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	190
Իրավաբանի կողմից տրամադրված ծառայություն	19
Փոխօգնության խմբեր	42
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՀՀ	392
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՌԴ	135
Նախկինում ՀՌՎ բուժման դադար ունեցած և այժմ բուժմանը կցված	20

www.realwrp.org



«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից, «ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» ծրագրի շրջանակում 2026թ.-ի երկրորդ եռամսյակի (ապրիլ-հունիս) ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Մատուցված ծառայություններ	**3160**
Ծառայություններ ստացած անձինք	**2642**
Թեստավորում անցած անձինք	**1430**
Բացահայտված ՄԻԱՎ դրական դեպքեր	**8**
Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ուղեգրված ՄԻԱՎ դրական դեպքեր	**8**

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից «Տուբերկուլոզ ունեցող անձանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում 2026թ.-ի երկրորդ եռամսյակի (ապրիլ-հունիս) ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	203
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	426
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	125
ԹԱԿ-ից և պոլիկլինիկաներից մեզ ուղեգրված անձինք	189
Մեր կողմից ծառայություններ ստացած անձինք	189
Փոխօգնության խմբեր	37

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Մայիսի 19-20

ՁԻԱՀ-ի միջազգային ասոցիացիայի (IAS - International AIDS Society), «Աշխարհի բժիշկներ»-ի (Médecins du Monde Armenia), «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի և «ՏԲ մարդիկ» գլոբալ ցանցի համատեղ ջանքերով մայիսի 19-ին և 20-ին Երևանում մեկնարկեց տարածաշրջանային հանդիպում՝ նվիրված ՄԻԱՎ-ի արձագանքին, վնասի նվազեցմանը, մարդու իրավունքներին և կայուն քաղաքականությունների ձևավորմանը Հայաստանում և տարածաշրջանի այլ երկրներում:

Մայիսի 25-26

Մայիսի 25-ից 26-ը Աղվերանում անցկացվեց «Առաջնորդության և առողջապահական հավասարության կառուցում Հայաստանում թմրանյութեր օգտագործող մարդկանց համար» խորագրով դասընթաց:
Նպատակն էր զարգացնել թմրանյութեր օգտագործող մարդկանց առաջնորդական հմտությունները, բարձրացնել նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում և նպաստել առողջապահական հավասարության ապահովմանը:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Հունիսի 10

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ում կայացավ թվային անվտանգության դասընթացը, որն իրականացվեց Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի աջակցությամբ (**Media Diversity Institute - Armenia**): Դասընթացը վարեց Ալեքսեյ Չալաբյանը՝ ներկայացնելով թվային անվտանգության կարևոր սկզբունքները, անձնական տվյալների պաշտպանության գործիքները, առցանց ռիսկերի կառավարման մեթոդները և անվտանգ հաղորդակցության հիմունքները:

Հունիսի 11-14

Հունիսի **11**-ից **14**-ը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության թիմը Ծաղկաձորում էր՝ ռազմավարական պլանավորման եռօրյա հանդիպման: Քաղաքային առօրյայից դուրս անցկացված այս հանդիպումը հնարավորություն տվեց կենտրոնանալ կազմակերպության զարգացման հեռանկարների, առկա մարտահրավերների և առաջիկա տարիների առաջնահերթությունների վրա:

Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին

Մայիսի 19-20

Մայիսի 19-20-ը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի գործադիր տնօրեն Նաիրուհի Սաֆարյանը Նորվեգիայի Օսլո քաղաքում մասնակցեց «Համայքային աջակցության ուժի հզորացում տուբերկուլոզ (ՏԲ) ունեցող մարդկանց համար» խորագրով միջազգային աշխատաժողովին:

ԶԼՄ-ների անդրադարձը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի գործունեությանն ու միջոցառումներին

ԲՈՒՆ TV

Բուժաշխատողների էթիկայի կանոնները, հանձնաժողովի գործունեությունը | Առողջ փոդքաստ

real world
real people

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ

+374 98 66 33 83

info@realwrp.com

www.realwrp.org